

---- 2018թ.

ՀՀ, ք. ---

«----» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), իրավաբանական հասցե՝ ----, ի դեմս կազմակերպության նախագահ -----ի, ով գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից և -- քաղաքացի ---ն, անձնագրի համար՝ ---, տրված՝ --թ., ---ի կողմից (այսուհետ՝ Կամավոր), մյուս կողմից, երկուսը միասին անվանվելով՝ Կողմեր, կնքեցին կամավոր աշխատանքի պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Կազմակերպությունը Կամավորին տալիս է հնարավորություն մասնակցել (---- ծրագրի շրջանակներում իրականացվող) որպես՝ Կամավոր, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է կատարել 1.2 կետում նշված աշխատանքը՝ Պայմանագրով սահմանված պայմաններով:

1.2 Սույն Պայմանագրով Կամավորին տրվում են հետևյալ աշխատանքային գործառույթները՝

ա) -----

բ) -----

գ) Կամավորին հանձնարարվող և/կամ նրա կողմից առաջարկվող այլ առաջադրանքներ:

Գործողությունները կարող են վերանայվել՝ կախված կազմակերպության ընթացիկ գործունեությունից և կամավորի կարողություններից ու նախընտրություններից:

1.3 Կամավորական աշխատանքի իրականացման վայրն է՝ --- հասցեում գտնվող ---- հասարակական կազմակերպության գրասենյակը:

2. Կազմակերպության և Կամավորի իրավունքները և պարտականությունները

2.1 Կամավորն իրավունք ունի.

- մասնակցել Կազմակերպության գործունեության և նրա կողմից կազմակերպվող միջոցառումներին, որոնք համապատասխանում են Պայմանագրի 1.2 կետում նախատեսված գործողություններին,
- կամավոր աշխատանքի ավարտին ստանալ հավաստագիր,
- Կազմակերպության կողմից ապահովված լինել աշխատանքային պայմաններով,

2.2 Կամավորը պարտավոր է.

- աշխատանքը սկսել ---ից,
- բարեխղճորեն և Կազմակերպության աշխատանքային կանոններին համապատասխան կատարել իր աշխատանքային գործառույթները,

- պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,
- բարեխղճորեն վերաբերել Կազմակերպության գույքին, իսկ սպառնացող վտանգի ծագման մասին անմիջապես տեղեկացնել Կազմակերպությանը,
- Պայմանագրի դադարեցումից հետո՝ իր պատասխանատվության տակ գտնվող գույքը հանձնել Կազմակերպությանը,
- հատուցել Կազմակերպությանը պատճառված նյութական վնասները, որոնք առաջացել են Կամավորի մեղքով՝ իր աշխատանքային գործառույթների իրականացման ժամանակ,
- իր աշխատանքային գործառույթները կատարել անձամբ:

2.3 Կազմակերպությունն իրավունք ունի.

- աշխատանքի ժամանակ ստուգել Կամավորի աշխատանքի կատարման ընթացքը և Կամավորի կողմից իր աշխատանքային գործառույթները ոչ պատշաճ որակով կատարելու դեպքում չընդունել դրանց արդյունքները և պահանջել պատշաճ որակի աշխատանքներ,
- որոշել Կամավորի աշխատանքների կատարման հաջորդականությունը և ըստ ժամկետների տալ սույն Պայմանագրից բխող այլ առաջադրանքներ:

2.2 Կազմակերպությունը պարտավոր է.

- Կամավորի համար ապահովել աշխատանքի նորմալ պայմաններ,
- Կամավորին ծանոթացնել Կազմակերպության ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին,
- աջակցել Կամավորի մասնագիտական աճին և քաղաքացիական ներգրավման զարգացմանը,
- չներգրավել կամավորին Կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությանը,
- ժամանակին ապահովել Կամավորին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով,
- Կամավորին հատուցել աշխատանքի իրականացման արդյունքում վերջինիս կողմից փաստացի կատարված ծախսերի դիմաց:

3. Աշխատանքի պայմանները, տևողությունը, հանգիստը, արձակուրդը

3.1 Կամավորի համար սահմանվում են աշխատանքի նորմալ պայմաններ, որոնք ներառում են՝

ա/ Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ նյութերի, սարքավորումների և այլ միջոցների սարքին վիճակը, դրանք ժամանակին տրամադրելը,

բ/ անհրաժեշտ փաստաթղթերով ժամանակին ապահովելը,

գ/ այլ պայմաններ, որոնք անհրաժեշտ են աշխատանքը կատարելու համար:

3.2 Կազմակերպությունը ապահովում է աշխատանքի անվտանգ և անվնաս պայմանները (անվտանգության տեխնիկայի նորմերի և կանոնների պահպանումը, պատշաճ լուսավորությունը, ջեռուցումը, օդափոխությունը, սահմանված նվազագույն նորմաներից ցածր աղմուկը, պաշտպանություն ճառագայթումից, վիբրացիայից և

Կամավորի առողջության համար բացասական ներգործություն ունեցող այլ վտանգավոր գործոններից), ինչպես նաև այլ պայմաններ, որոնք անհրաժեշտ են Կամավորի գործառույթներից բխող աշխատանքները կատարելու համար:

3.3 Կամավորի աշխատաժամանակի շաբաթական տևողությունը կազմում է ---- ժամ, երկուշաբթի-ուրբաթ օրերին (2 հանգստյան օր՝ շաբաթ, կիրակի): Կամավորի աշխատանքը սկսվում է առավոտյան ժամը ---ից և ավարտվում ----ին՝ հանգստի և սնվելու համար մեկժամյա ընդմիջումով՝ 13:00-ից մինչև 14:00-ը:

3.4 Կազմակերպության հետ համաձայնեցված կարգով Կամավորին կարող է տրամադրվել ամսական -- օր հանգիստ:

4. Աշխատանքի կատարման պայմանները

4.1 Կամավորի աշխատանքը կատարվում է անհատույց, կամավորական հիմունքներով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև --- թվականի ----ը:

6. Պայմանագրի փոփոխումը

6.1 Սույն Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն Կողմերի գրավոր համաձայնությամբ:

7. Վեճերի լուծման կարգը

7.1 Կողմերի միջև վեճի ծագման դեպքում այն ենթակա է կարգավորման Կազմակերպության և Կամավորի միջև անմիջականորեն՝ կառուցողական բանակցությունների միջոցով:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Պայմանագիրը ստորագրելիս Կամավորը ծանոթացել է կամավորի աշխատանքի պայմաններին, Կազմակերպության ներքին կարգապահական կանոններին:

8.2 Պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից, յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է մեկական օրինակ, որը հավաստվում է Պայմանագրի կնքմամբ: (Հայերեն և անգլերեն լեզուների միջև հակասությունների դեպքում գերակա է հայերեն տարբերակը):

9. Կողմերի տվյալները

Կազմակերպություն	Կամավոր
<p>Հասցե՝ ՀՎՀՀ՝ ----- Բանկ Հ/Հ</p> <p>Կազմակերպության նախագահ</p> <p>-----</p> <p>_____</p> <p>ստորագրություն</p>	<p>Հասցե՝ Անձնագիր՝ ---- Բանկ Հ/Հ</p> <p>-----</p> <p>_____</p> <p>ստորագրություն</p>